ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՕԳՈՍՏՈՍ 1, ԹԻՒ 14 · ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 135

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերը ծոյլ են.—

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

1 Ընդհանուր պատմութեան ուսումը հայ վարժարանաց մէջ. 2 "Գերուկի" մը գրութիւնը. 3 Կը՞թէ Ի՞. 4 Ակնայ գաւառաքարբառի ոչ-իսկական նմոյշ մը. 5 Թաղ վարդապետի քարոզը Worldի մէջ տեղեկագրուած. 6 Հակասական հեռագիրներ.—

Վիճակագրութիւն Ամերիկայի Հայոց. —Նամակ Քալիֆորնիայէ.— Նամակ խմբագրութեան.— Մշեցւոց բանաստեղծութիւն.—Վաղինակ վարդապետ Սիսակեան։

ՀԱՅԵՐԸ ԾՈՅԼ ԵՆ

Ի Գահիրէ հրատարակուող հայերէն լրագրին՝ «Փարոսի»՝ մէջ կարի չահեկան վէճ մը բացուած է. «Փարոս» կը կարծէ թէ Հայերը ծոյլ են. թղթակիցք ոմանք կը բողոքեն այդ կարծիքի դէմ։

Ես ալ «Փարոսի» համակարծիք եմ։ Զեմ ասեր թէ Հայոց մէջ ծոյլեր կան, այլ թէ հայ ժողովուրդը ծոյլ է։

«Ծոյլ» ածականն ալ, ուրիշ ամեն ածակա՛ի պէս, բաղդատական իմաստ ունի։ Գահիրէ մեծ է (քան Զակազիկ) և պզտիկ է (քան զԲարիզ)։ Եթէ արևուն մէջ ապրող կենդանի մը ձգուէր մեր հըրաորրոք փուռերէն մէկուն մէջ, պիտի մսէր սաստիկ։ Երբ Հայերը ծոյլ կ'ասենք, զիրենք Թուրքիայէն դուրս, արևմտեան երկրի մէջ նկատելով կ'ասենք, վասն զի մեր գաղթականները այժմ Եւրոպիոյ, Ամերիկայի և կամ եւրոպական մթնոլորտով պատած Գահիրէի կամ Աղէքսանդրիոյ մէջ ապրելու ստիպուած են։ Ուրեմն երբ Հայք ծոյլ են կը վճռենք, ասել չենք ուզեր թէ նոքա աւելի աշխատասէր չեն քան զԹուրքերն և այլ արևելեան ցեղերը, այլ թէ ծոյլ են բաղդատմամբ արևմտեան ազգաց։

Ինչպէս որ Ֆռանսացին լատին ազգաց մէջէն բնաւորութեամբ ամենէն մերձաւորն է անգլո-սաքսօնին, այնպէս ալ Հայն արեւելեան ազգաց մէջ ամենէն աւելի կը մօտենայ արևմտեաններուն, բայց այս ասել չէ թէ անոնց հաւասար է։ Որ Եւրոպացի հեղինակ որ զմերն համեմատեր է «եւրոպական ամենաաշխատասէր ազգերու հետ,» խոշոր սխալ մ'է գործեր։

Ինչ, միթէ մենք զմեզ չե՞մք ճանաչեր։ Միթէ մեր գաւառացի հայ վաճառականներն իսկ չե՞ն խոստովանիր ճշմարտութիւնը երբ Հալէպ կ'երթան և Եւրոպացի վաճառականներու գործունէութիւնը դիտելու առիթ կ'ունենան։ Միթէ Ամերիկա եկող ամեն Հայու աչքին չի՞ գարներ բնիկներուն լափիչ գործունէութիւնը

և արագութիւնը։

Ծուլութիւնը, դանդաղութիւնը, տարտամութիւնը, խոկանքը արեւելքի յատկանիշն է, բաղդատելով արեւմտից։ Ապրուստի հարկէն ստիպուած կ'աշխատին գիւղացիք այս ինչ եղանակին, և մնացած եղանակները կ'անցուցնեն նստելով, տեսակ մը երազանքի մէջ։ Ես դիտած եմ Թուրքիայէն նոր եկած երիտասարդ որ Նիւ Եորքի մէջ, աթոռի մը վրայ նստած կը խոկայ կէս ժամ, ժամ մը, որպէս թէ իմաստասէր մը լինէր խորին մտածութեանց մէջ ընկղմած։

—«Ինչ՞ կ'անես, Պարոն Փ.»

—«Կը խորհիմ։»

—«Պարո՛ն, կ'աղաչեմ, այդքան մի՛ խորհիր, գործէ, գործէ՛։ Եւ մի՛ կարծեր թէ կը խորհիս. ատոր չեն ասեր խորհիլ. ատիկա արթնութիւնը երազի փոխել է, կեանքը վատնել։»

Իրաւ, Արեւելցիք դրամը շատ կը խնայեն ու ժամանակը կը շռայլեն։ Հինգ սենթ տալ և 5 մղոն տեղ հանրակառքով երթալ և շուտով տեղ հասնիլը շռայլութիւն կ'երևի իրենց, բայց հինգ ժամ պարապ նստիլ յօժարութեամբ կը նստին։

Իսկ Ամերիկացին ժամանակը կը խընայէ, ու դրամը կը ծախսէ։

Պատճառն այն է որ Արեւելցին բռնապետութեան (despotism) լուծը կը կրէ իսկ արեւմտեան ազգերը աւելի կամ նուազ ազատ են։

Ծուլութիւնը բնական ախտ մ'է բռնապետութեանց տակ։ Բացարձակ միապետին կամքն ու քմահաճոյքն են երկրին օրէնքներն, և ժողովուրդը գերի է, ոչ իւր ստացուածոց տէր է, ոչ իւր ժամանակին և ոչ իւր անձին։ Երկար տարիներու աշխատութեանց պտուղ եղող հարստութիւնը կրնայ մէկ աւուր մէջ ձեռքէն յափշտակուիլ։ Գիւղացին խեղճ ապրուստի մը համար միայն կ'աշխատի, ուրեմն քիչ կ'աշխատի. եթէ ծառ տնկէ, ծառին համար աւելի տուրք վճարելու է կառավարութեան քան ծառին տուրքը։

Հայաստանցի գիւղացի Հայեր կը պատմեն ինծի թէ երբ դրամ ունենան, տանը մէջ ծակ մը, առիքը, պատուհանը, տեղ մը կը պահեն յարդի մէջ, և յաճախ կը կորնչի. ինչո՞ւ, վասն զի եթէ Պէկը գիտնայ թէ դրամ ունին, փոխ կուզէ և չի վերադարձներ։ Այդ դրամը երևան հանել, բան մը գնել քաղաքէն և վաճառել և շահիլ նոյպէս վտանգաւոր է։ Ծախեցիր, դրամը ձեռքդ է. Աղան փոխ կ'առնու։ Ուրեմն լոկ ապրուստը կուզէ գիւղացին։

Ուրեմն աշխատասիրութիւն, նախաձեռնութիւն, ժրութիւն անօգուտ են հոն, և ժողովուրդը ստիպուած է, այսպէս ասենք, ծոյլ և դանդաղ և յոյլ լինելու։

Ճշմարիտ հայրենասէրը միշտ պէտք է խթանէ մեր գաղթականներն յաշխատասիրութիւն։ Եթէ դոքա եւրոպական ժրութեան վարժուին և արեւմտեան գործունէութեան ընտելանան, ոչ միայն կը ապրին այլ և կրնան տակաւ հարստանալ։ Եւ որ աւելին է, եւրոպական բնաւորութեան և կրթութեան հաղորդ լինելով՝ կրնան օր մը— և օրը մօտ է յուսամ— դառնալ Արեւելք և հոն մեր ժողովրդին հաղորդել նոյն կրթութիւնը։ Այս կերպով հայ ազգը եւրոպական կրթութիւն առած կը լինի։ Մէկ կողմէն Եւրոպացիք կը կրթեն մեր որբերը արեւելքի մէջ և միւս կողմէն մեր երիտասարդները գործնական կրթութիւն կ'առնուն արեւմուտքի մէջ։ Եթէ այս երկուքին վրայ հայրենասէր հսկողութիւն կատարենք, մեր ազգը կրնայ զգալապէս կերպարանափոխ լինիլ և արեւելքի մէջ իւր տնտեսական և իմացական գերազանցութիւնը ապահովել.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ընդհանուր պատմութեան ուսումը հայ վարժարանաց մէջ։

«Արեւելեան Մամլոյ» 11 և 12 թիւերուն մէջ Տիար Ամատեան կը քննադատէ Տ. Դաւիթ Ց. Խաչկեանի ՀԱՄԱՌՕՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, զորոյ գոյութիւնը կ'իմանամ այդ առթիւ։ Գործը տեսած չլինելով, չեմ կրնար անոր արժանիքը կշռել, բայց քննադատին դիտողութիւններն թոյլ կուտան ինձ ընդհանուր նկատողութիւն մ'անելու Պատմութեան ուսման վրայ մեր վարժարանաց մէջ։

«11—13 տարեկան տղոց» ընդհանուր պատմութեան էականն ու կարեւորն աւանդելու համար դասագիրք մ'է եղեր քննադատեալ գործն, որպէս կ'իմանամ

յոդուածէն։ Արդեօք Տիար Խաչկե՞ան նշանակած է այդ տարիքը թէ Տիար Ա. մատեան կ'ենթադրէ զայն, զիարդ և իցէ, 11էն 13 տարեկան տղոց Ընդհանուր Պատմութիւն ուսուցանել վաղաժամ է. այդ հասակին մէջ տակաւին իրենց ազգային պատմութեան ուսմամբ կը զբաղին ամեն երկրի ուսանողք։ 12 տարեկան տղոց համար ընդհանուր պատմութեան դասագիրք մը խմբագրել անհնար գործ մ'է։ Նիւթը անհուն է. տեղն անհնարին անձուկ։ Հեղինակը պիտի հարկադրի կա՛մ հարեւանցի յիշել դէպքերը և զգիրքն անել թուականներու և շոր տարեգրութեանց պինդ ու անսնունդ խճողակ մը, կա՛մ գլխաւոր ազգաց էն պատմական շրջանակներն օգտակար ընդարձակութեամբ պատմել։ Վերջինն է լաւագոյնը, բայց մատչելի միայն 13էն 16 տարեկան տղոց։ Այսպիսի գործ մը պատրաստելու համար ներհուն պատմագէտ պէտք է լինիլ, և մասնագիտօրէն ընտրել էն շահեկան շրջաններն։ Իսկ եթէ ամեն ազգի խոշոր դէպքերը յիշել և անցնիլ է գործը, ո և է մէկը կրնայ ձեռնարկել յայն։

Տ. Ամատեան կը մեղադրէ զՏ. Խաչկեան թէ բազում կարեւոր անձեր և դէպքեր գանց արեր է։ Մեղանդրանքը անտեղի է. չէր կրնար այլապէս անել։ «Լուդովիկոս ԺԴ.էն վերջ Ֆռանսայի պատմութիւնը կը լռէ և երկու դարու վրայէն ահագին ոստում մը ընելով կը հասնի Մեծն Նաբոլէոնի հիւպատոսութիւնը ու կայսրութիւնը։» Այդ է Տ. Ամատեանի մեղադրանքներէն մէկը առ Տ. Խաչկեան։ Արդ, Լ. ԺԴ.ի պատմութիւնը կը վերջանայ 1715ին, և Նաբոլէոնի հիւպատոսութիւնն կը սկսի 1799ին. ինչպէս կը հաշուէ «երկու դար» Տ. Ա.։ Եւ դարձեալ, այդպիսի ոստումներն հարկաւոր են, անհնար է Ընդհանուր Պատմութիւն մը գրել 400 կամ 500 էջով՝ առանց ոստումներ անելու։

Կը կրկնեմ, սակայն, թէ ազգային պատմութենէն գաս ընդհանուր պատմութիւն ևս աւանդել 11—13 տղոց՝ ինդրէ դուրս է. այլև այլ ազգաց պատմութենէն կենսագրութիւններ աւանդել կարելի է այդ միջոցին, բայց ընդհանուր պատմութիւնը 13էն յետոյ պէտք է գայ, և անշուշտ գայ։ Չկայ ուսում մը որ պատմութեան չափ օգտակար լինի միտքը լուսաւորելու և դատողութիւնը սրելու։ Այդ ուսման աւելի հոգ տանիլ պէտք է մեր վարժարանաց մէջ. բայց առ այդ պէտք է ունենալ կարող դասատուներ և ընտրելագոյն գասագիրք։

***

«Գերուկի» մը գրութիւնը։

Կ. Պոլսէն «Գերուկ» ատորագրութեամբ թղթակցութիւններ կը հրատարակուին վերջերս Թիֆլիսի «Մշակ»ին մէջ։ Նամակներէն մէկուն մէջ սա տողերը կան. «Սա ատոյգ է, կ'ասէ Գերուկ, որ շատ տեղեր մեծ մասամբ աղքատ և արհեստաւոր գասակարգերն եղած են չարաչար ճնշուողներն, իսկ էֆէնտիական բարեկեցիկ ազնուաշուք դասակարգը ո՛չ թալան տրուած է և ո՛չ ալ սպաննուած։»

Ինչո՞ւ արդեօք։ «Գերուկ» ատոր պատասխանը կուտայ—«Թուրքերը խնայեցին անոնց, կ'ասէ, վասն զի ազգային համար պէտք ունէին անոնց վկայութեանը՝ թէ Հայերն էին մեղաւոր։»

Պարոն Գերուկ նախ սխալ կը ներկայացնէ իրողութիւնը, և ապա իւր կողմէն կը կարկատէ երևակայեալ իրողութեան երևակայական մեկնութիւն մը։

Իրողութիւնը սա է թէ Թուրքերը ոչ միայն չխնայեցին բարեկեցիկ, ազդեցիկ դասուն, այլ, ճիշդ հակառակն, յատուկ ճիգեր թափեցին ազդեցիկ ու բարեկեցիկ Հայերն կոդոպտել ու սպաննել։ Շատ տեղեր այնպիսեաց անուններն կանխաւ թղթի վրայ արձանագրելով՝ կազմակերպիչները պատուէր տուին կոտորիչներու առաջնորդներուն գտնել և ջարդել հայ հասարակութեան կարեւորագոյն անդամները անպատճառ, և ոչ-կարեւորներէն ալ որքան չատ որ կրնան։ Որովհետև փոթորկի նշաններէն վախնալով դուրս չէին ուզեր ելնել երևելիներն, Թրքերը ջանքեր արին յատուկ այցելութեամբ կամ կեղծ յանձնարարութիւններով դուրս բերել զանոնք. բայց և այնպէս չատերը յաջողեցան պահուիլ և խոյս տալ կոտորածէն։ Սեբաստիոյ մէջ Թուրքեր 30ի չափ նշանաւոր անուններու ցանկ մը պատրաստած էին, որոյ ամենակարեւոր զոհերը, բայց 30ն ալ խուսափեցան, վասն զի իրազեկ էին թէ իրենց համար մասնաւոր վտանգ կար և զգոյշ գտնուեցան։ Յակն ալ 15ի չափ ե-

բիտասարդներ իբրև յեղափոխական արձանագրուած էին դատապարտելոց ցանկին մէջ, գոյգ ընդ երևելի հարուստներուն. հարուստներն մորթուեցան, զի տիմարաբար կարծեցին թէ իրենց թուրք բարեկամներն պիտի պաշտպանէին զիրենք, իսկ 15 երիտասարդներուն ամենն ալ պրծան, զի ամենևին յոյս չունէին պաշտպանութեան և ամենամեծ զգուշութեամբ պահուեցան։

Կոտորածոց պատմութիւնը եթէ բան մը ամենապայծառ կերպով ակներև կը ցուցնէ, այն ալ ճիշդ այդ է թէ Թուրք կառավարութիւնը կամ Սուլթանը ուզեց Հայոց ոյժը ջլատել՝ մէջտեղէն վերցնելով հայ հասարակութեան իմացական և նիւթական զօրութեանց ներկայացուցիչներն մանաւանդ։ Գերուկ չարաչար կը խեղաթիւրէ իրողութիւններն և եթէ, Աստուած մի՛ արասցէ, պատմութիւն գրել ձեռնարկէր, առաջել դուրս կուգար դրչէն։

Գերուկի պատմական խղճմտութեանը կը հաւասարի և իւր հայերէն չարադասութիւնը, անկարգ և անկանոն։ Ահա նմոյշ մը.—

"Ազգին իրաւունքը, ժողովրդին հանգստութիւնը, արդարութեան ձայնը, անմեղին պաշտպանութիւնը՝ կայսերական պատիւներէ, պատուոյ նշաններէ, խոստացուած փայլուն ոսկիներէ զեր ի վեր դասեց, մինչև իսկ յանձն առաւ, ապազայ վտանգներէ՝ որ հետզհետէ սպառնական երևոյթ մը ստացած էին, իր սիրելի հօտն ազատ պահելու, կամ գէթ՝ իր պաշտօնավարութիւնը նոյն վտանգներու իրագործման շարժառիթ չլինելու համար, հրաժարիլ պատրիարքական աթոռէն և երթալ մենանալ Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ իր սիրած խցիկին մէջ։"

Գերուկ իմացած է թէ հայերէնի չարադասութիւնը շատ ազատ է բաղդատմամբ Ֆռանսերէնին և այլ եւրոպեան լեզուաց, բայց պէտք է չկարծէ թէ այդ ազատութիւնը ապօրէն և քմահաճ ազատութիւն մ'է։

***

Կը՞ թէ կ'

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ «կը տեսնէ, կը խորհի» գրելու տեղ, «կ'տեսնէ, կ'խորհի» և այլն կը գրէ, և իւր շարժառիթն է խնայողութիւն տեղւոյ։ Բ.ի այդ տնտեսական պատճառը ինչպէս ցարդ խուսարեր է անգլիացւոց մտքէն որ to go, to think գրելու տեղ չեն գրեր t'go, t'think։ Բ. պարզապէս ետ դառնալ կ'ուզէ մեր հայրերու գրելու եղանակին, որք Աստ կը գրէին Աստուած-ի տեղ, հմր համար-ի փոխանակ, և իրենց գրութիւնք լի էին այդպիսի համառօտութիւններով։ Կը սպասենք տեսնել Բ.ի յաջորդ քայլը դէպ յետ։

***

Ակնայ գաւառաբարբառի ոչ-իսկական նմոյշ մը։

«Ծաղիկ» չաբաթաթերթին թ. 12ին մէջ «Ակնայ գաւառաբարբառը» խորագրով յօդուած մը կայ, որ սապէս կը սկսի. «Ի սորեւ կը հրատարակենք Ակնայ գաւառաբարբառին իսկական նմոյշ մը, որ գրուած է 55 տարի առաջ, առեւտրական գործի առթիւ։»

«Ծաղիկի» վերոյիշեալ թիւը յատուկ ապսպրելով Կ. Պոլսէն ստացայ, և կարդալով նմոյշը տեսայ թէ սխալեր է Մեն. Գիմ. տալով զայն իբրև իսկական։ Ինչպէս նամակէն կ'երեւի, նամակագիրը երկար ատեն ի Կ. Պոլիս բնակած, և մայրաքաղաքին հայերէնին ընտելացած է, և թէպէտ Ակնէն կը գրէ ընդ խնդրով գիրն, կը գործածէ պոլսական շատ մը բառեր և ասութիւններ, այնպէս որ Ակնայ գաւառաբարբառի նմոյշ լինելէ շատ հեռի է այդ նամակը։

Գաւառաբարբառներու ուսման պարապող բանասէրներն այսպիսի պարագաներն նկատել պարտին։

***

Խաղ Վարդապետ Մարգարեանի քարսզը World լրագրին մէջ տեղեկագրուած։

«Հինգ հարիւր Հայ խառնուած էին ի սուրբ Ոսկերերան եկեղեցին և ունկնդրեցին այն հրաբորբոք բողոքին զոր Խաղ Վարդապետը որոտաց ընդդէմ Ամերիկայի միսիոնարաց միջամտութեանն ի Հայաստան։ Մայր հայրենեաց նեղութիւններուն վրայ հրացայտ պերճախօսութեամբ ճառեց՝ յայտարարելով թէ Ամերիկայի միսիոնարներն մեծապէս պատասխանատու էին։... Նոքա բերին մեր ազգին գլխուն այս բոլոր աղէտը, և հիմա մեր ճարահատութենէն օգուտ կը քաղեն իրենց կրո-

նական չահերը մեր մէջ յառաջ տանելու։»

Այդպէս գրուած է World-ի Յուլիս 19 թուոյն մէջ։ Եւ մինչև այսօր Խաղ Վարդապետը երկու տողով ժխտած չէ այդ տեղեկագիրը։

* * *

Հակասական Հեռագիրներ

ԱՌԱՋԻՆ ՀԵՌԱԳԻՐ

Պէռլին, Յուլիս 19—Հոս ստացուած հեռագրի մը համեմատ՝ Նիկոլա Կայսրն հեռագրած է Սուլթանին՝ պահանջելով որ Թեսալիայէն անմիջապէս ձեռնթափ լինի, և սպառնալով, եթէ այդպէս չանէ, թէ ռուս զօրքը սահմանագիծը պիտի անցնին։

Հոս կէս-պաշտօնապէս կ'ասեն թէ բաց յԱնգլիայէն բոլոր միւս տէրութիւնք հաւանած են այս ընթացքին։

Վերի հեռագրին հակասող լուրը չուշացաւ. ահաւասիկ—

ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌԱԳԻՐ

Լոնտոն, Յուլիս 20—Տէյլի Թէլէկրաֆին Վիէննայի թղթակիցը կ'իմանայ թէ Բրիտ. Կառավարութիւնը Թուրքիոյ անմիջապէս բռնադատումը պահանջած է։ Ռուսիա, միւս կողմէն, յայտարարած է թէ բռնադատելու վայրկեանը դեռ չէ հասած։ Գերմանիա յայտմ համաձայն է Ռուսիոյ։

Այս երկու հեռագրոց ո՞րն է ճշմարիտ։ Զևապէս երկուքն ալ գուցէ չինծու, բայց մեզի հաղորդուած՝ սակայն մամլոյ մէջ դեռ լոյս չտեսած լրոյ մը նայելով՝ մենք կը միտինք հաւատալու թէ երկրորդ հեռագիրն կը ցուցնէ թէ ինչ կ'ասէ Ռուսիա, իսկ առաջինն՝ թէ ինչ կը խորհի նա։

Հետևեալն ալ ուշադրութեան արժանի է.—

Փեդրպուրկ, Յուլիս 20—Պաշտօնական Կազէթան կը ծանուցանէ թէ Կ. Պոլսոյ ռուսական դեսպան կարգուած է Սթօքհոլմի դեսպան Բիար Զինովիէֆ, և թէ կոմս Նէլիտով պիտի փոխադրուի Հռովմ։

ՊԱՅՄԱՆՔ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԻ
Տարեկանը երկու տոլար (տասը ֆրանք.)
Վեց ամսուանը մէկ տոլար։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՅՈՎՍԷՓ Կ. ՃԱՆԻԿԵԱՆ
ԴԻՓՈԽՔ
133 երես. Գին 40 կոպէկ։
Թիֆլիզ 1897, Տպատ. Յ. Մարտիրոսեանցի

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Գ. ՀԷՅՎԸՐՀԻԼ, Haverhill Mass.

Տիար Տեփոյեան կը գրէ մեզ վերոյիշեալ քաղաքէն.—

Ձեր փափաքանաց համաձայն կը գրեմ ձեզ քաղաքիս Հայոց թիւն որ չատ ճիշդ է։ 98 Հայ կայ հոս, ի միջի որոց երեք ընտանիք։ Աւելի քանի մը ամիս առաջ հոս բնաւ հայ ընտանիք չկար։ Ասոնց երկուքը Կ. Պոլսէն եկած են և մէկը՝ Մարաշէն։

Դ. ՆԻՒ ՀԷՅՎԸՆ, New Haven, Conn.

Տիար Թաշճեան կը գրէ մեզ.—

Քաղաքիս Հայոց թիւն 57 է։ Ասոնց մէջ կան վեց ընտանիք— Գազանճեան (8 անդամ), Եադուպեան(7), Գուլաքոզեան (2), Կոստանդեան(5), Մորեան(4), Գրիգորեան(4)։ Մացածներն երիտասարդ են։

Ե. ՊՐՈՒՔՇԱՅՐ, Brookshire, Texas.

Տիար Լ. Յ. Աւագեան կը գրէ մեզ Պրուքչայրէն.—Թէքսասի Ուալլէր Քաունթիի մէջ ունինք տասը տուն Հայ, որոնք կը բնակին Պրուքչայր և Փէթէրսըն գիւղաքաղաքներուն մէջ։ Սոցա 8 տունը ընտանիք կը կազմեն, իսկ երկու տունը ամուրեաց է։ Բոլորը մէկտեղ 43 հոգի կայ, որոց 27 ուժով և 16ն գեղեցիկ սեռին կը պատկանին։ Կացութիւնն բարեկեցիկ է։ Ուրիշ անգամ նոցա չահեկան մասերը կը գրեմ։

Զ. ՔՕՆՔՈՐԴ, Concord, N. H.

Տիար Մ. Նաճարեան կը գրէ մեզ.—Այս տեղի Հայոց ամբողջ թիւն 23 է։

Է. ՄԻԼՖԸՐԴ, Milford, Mass.

Տեղւոյս հայ գաղթականաց թիւն 25 է։ ԼՐԱՏՈՒ

Ը. ԹՐՈՅ, Troy, N. Y.

Քաղաքիս Հայոց թիւն 115 է, մանուկներն ալ հաշուելով։ Կ'ունենանք կիրակնօրեայ ժողովներ, կրօնական և ազգային։ Ունինք նաև քանի մի կուսակցութիւններ։ Ա.

Թ. ՇԻՔԱԳՕ, Chicago, Ill.

Պատ. Խնկեան կը գրէ մեզ.— Քաղաքիս մէջ կան 116 Հայ. որոց 16ը միայն իգական սեռէն են և 12 հատ մանուկներ կան։ West Pullman որ քաղաքիս արուարձանը կը համարուի, հոն ալ 26 հայ ունինք, որով գումարն կը լինի 192։

ՆԱՄԱԿ ՔԱԼԻՖՈՐՆԻԱՑԷՆ

Ֆրէզնօ, 9 Յուլիս, 1887

Այս տարի ևս քաղաքիս մասնախմբին կողմանէ տեղւոյս «Ֆ. Հ. Գ. Մ.» ընկերութեան յատուկ հրաւիրագիր ղրկուեցաւ մասնակցելու Յուլիսի 4ի տարեդարձի թափորին։ Ընկերութիւնս ընդունեցաւ մասնակցիլ և պատրաստեց 2 Float որոց մին կը ներկայացնէր 3դ դարէն ց13դ դար Հայաստանի վիճակն, այսինքն ծաղկեալ ու բարգաւաճ։ Հայ թագաւոր մը բազմած փառաւոր գահի մը վրայ չուրջը երկու թիկնապահներ հայկական հին տարազով, քիչ մը անդին առատութեան դիցուհին կը ներկայանար իւր առջեւն ու չուրջը սիռուած ծաղիկներ, պտուղներ ու ցորենի հասկեր, այդ դիցուհւոյն դէմ յանդիման կղերական մը նստած գրականութեամբ կը պարապէր մագաղաթեայ հին գրքերու դէզի մը առջև։

Բ Floatը կը ներկայացնէր Հայաստանի ներկայ վիճակը. Սուլթանը իւր համազգեստովն բազմած արիւնագոյն կարմիր գահի վրայ իւր չուրջն ունենալով Քիւրտի և Առնաւուտի տարազներով թիկնապահներ իւրեանց սովորական զէնքերովն. քիչ մը հեռուն՝ սև չղարշով ծածկուած խաչ մը կանգուն որոյ պատուանդանին առջև խոնարհ դիրքով նստած էր «Մայր Հայաստանին,» նորա դէմը Uncle Samը՝ Ամերիկայի ներկայացուցիչը, կանգնած կարեկից ու զթոտ ակնարկ մը կուղղէր առ «Մայր Հայաստանին» ու մերթ սպառնական ակնարկներ առ Սուլթանն։

Նախորդ տարուան պէս մեծ ընդունելութիւն գտաւ ժողովրդեան կողմանէ ու չատ անգամներ ծափահարուեցաւ. տեղացի ժողովուրդն և լրագիրք գովեստով խօսեցան ու յայտարարեցին թէ Հայոց Floatները ամենէն գեղեցիկն էին և թէ զարդարանք, գեղեկութիւն, ճոխութիւն ու ճաշակ միացած մեծ փայլ մը կու տային ամբողջ թափորին։ Յ. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Լոնտոն, Յուլիս 7, 1897.

Արդէն յայտնի է ՀԱՅՐի ընթերցողներին Բաֆֆիի անտիպ և սպառուած երկերի մասին, որոնց պահանջը հետզհետէ աւելի սաստկանում է, հեղինակի վաճառելի գրքերից գոյացած արդիւնքը—որ նոցա հրատարակման միակ միջոցն է—չէ կարողանում ծածկել նոցա տպագրութեան ծախքերը։

Միանգամայն ինձ վրայ ծանրացած լինելով ընթերցող հասարակութեան այդ պահանջին բաւարարութիւն տալու հոգսը, վճռեցի ձեռնարկել նոցա հրատարակութեանը, դիմելով բաժանորդագրութեան։

Առ այժմ ձեռնարկում եմ Բաֆֆիի գլխաւոր աշխատութիւններից երեք ըսպառուած գրքերի տպագրութեանը.—

1. «Սամուէլ», I, II, III, հատոր մի գրքի մէջ ամփոփուած։

2. «Դաւիթ-Պէկ», I, II, III, հատոր վերջաբանով։

3. «Կայծեր» Հ. Բ. լիակատար։

Երեք գրքերի բաժանորդագինն է միասին 12 շիլինգ անգղ. դրամ, լոյս տեսնելուց յետոյ կ'արժենան 1 անգղ. ոսկի, իսկ իւրաքանչիւր գիրքը առանձին 5 շիլինգ, լոյս տեսնալուց յետոյ 7 շիլինգ։

Վերոյիշեալ գրքերի հրատարակութիւնը լինելու է Եւրոպայում ամենաշքեղ կերպով և հեղինակի վերջին պատկերով։

Իւրաքանչիւր գիրքը բաղկացած կը լինի մօտաւորապէս 900 մեծադիր երեսներից։

Ցանկացողները կարող են օգտուիլ վերոյիշեալ պայմաններից մինչև Սեպտեմբեր 1ը, որով թէ հեղինակի այդ երեք մեծադիր աշխատութիւնները դիւրամատչելի կը լինին, մանաւանդ նոցա համար, որ ցանկանում են ունենալ Բաֆֆիի գրուածքները, բայց միջոց չունին նոցա արժէքը միանուագ վճարել, և թէ թեթևացած կը լինին տպագրութեան ծախքերը։

Նորից ստացել ենք Բաֆֆիի վաճառելի գրքերից մեծ քանակութեամբ։ Ցանկացողները կարող են դիմել մեզ թէ՛ բաժանորդագրութեան և թէ հետևեալ գրքերի համար մեր հասցէին—

Mrs. Anna Raffi ԱՆՆԱ ՐԱՖՖԻ,
26 Loftus Road, Shepherd's Bush,
London W., England.

«Խենթ և Ջալալէտտին» մի գրքի մէջ ամփոփուած գինն է 6 շիլինգ։

«Խաչագողի Ցիչատակարանը» 4 մասերը մի գրքի մէջ 5½ շ.

«Վէպիկներ և Պատկերներ» Հ. Ա. և Բ. 9

«Կայծեր» Հ. Ա. 4½ շ.

«Խամսայի Մելիքութիւնը» 4½ շ.

«Զահրումար» Վէպ 4½ շ.

«Կայէնի Կտակը» 2½ շ.

«Մինն այսպէս և միւսն այնպէս» պատկերազարդ վէպ 2½ շ.

«Տաճկահայք» 1.

ՄՇԵՑԻՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ցաճախ կը պատահի որ մարախ երեւան կուգայ Մշոյ դաշտը, զոր բնիկք կը կոչեն կիտուռ, և մեծ աւերմունք կը գործէ ցանած հացհատիկներուն. այս առթով տեղացիք յօրինած են մի բանաստեղծութիւն զոր կ'երգեն:

ԿԻՏՈՒՌ

Երկինք ամպեց կիտուռ թափեց,
Կիտուռ թափեց զերկիր լափեց.
Ցորեն չեղաւ չահնան չափեց,
Կիտուռ եկաւ մինչ ի Խոփեր
Կերաւ զցորեն մեաց չոփեր:
Հաւար կիտուռ, մատաթ կիտուռ,
Ամեն արտէն քէլէմի տուր
Աչուն կանենք ճաւար պլղուր
Ձենք ինկնայ դուշմի դուռ:

Մեռնիմ քեզի սուրբ Կարապետ,
Ամեն Սրբերու զօրապետ,
Քօսէէն մատաղ կանչեց զուր ճետ:
Կիտուռ եկաւ թրթուրի հետ:
Հաւա'ր կիտուռ, մատա'ա կիտուռ,
Ամեն արտէն քելէմի տուր,
Աչնան կ'անենք ճաւար պլղուր
Ձենք ինկնայ դուշմի դուռ:

ՎԱՀԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Կիտուռ— մարախ: Ճետ— աքաղաղ: Հաւար—օգնութեան կանչել: Խոփեր— գիւղի անուն:

ՎԱՂԻՆԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՍԱԿԵԱՆ

Ամաւորիկ Փրովիտէնսի և շրջակայից Հայոց Նորառաք Հովուին վրայ քանի մը տեղեկութիւններ:

Հայր Սիսակեան Նիկոմիդիոյ Մեծ Նոր Գիւղն ծներ է 1858 Մայիսին (Եղիա Կարապետեան):

Իւր կրօնական ուսմունքն առած է Գլխաւորապէս Յերուսաղէմ, ի վարժարանի Ժառանգաւորաց: 1881ին դպրութեան աստիճան ընդունելով հանգուցեալ Եսայի Պատրիարքէն՝ 1883ին ուղեւորած է ի Կիլիկիա, և նոյն տարին սարկաւագ ձեռնադրուած է Սսոյ Աթոռոյն Ս. Սոփիա եկեղեցւոյն մէջ, և 1884ին, Կիլիկիոյ Կիւրին գաւառակի մէջ վարդապետութեան աստիճան ընդունած է: 1885էն ց1887 պաշտօնավարած է ի Պիլէճիկ, ուր ընդունած է նաև ծայրագոյն վարդապետութեան աստիճան ի Ղեւոնդ եպ. Շիշմանեանէ:

1887—89 Հայրենի երկրին Մեծ Նոր Գիւղի և շրջակայ տասը գիւղօրէից քարոզչութիւն արած է:

1889—96 ի Կ Պոլիս, քարոզիչ նախ ի Նարլը Գաեու, ապա ի Սամաթիա:

1896ի կոտորածին հետեւանօք ստիպուած է հեռանալ Կ. Պոլսէն ու անցնիլ ի Պուլկարիա, և անտի, Վեհ. Հայրիկի անօրինութեամբ մեկնելով եկած է յԱմերիկա:

Զհայր Վաղինակ տեսնելու հաճոյքն ունեցած չէ դեռ Խմբագրութիւնս, բայց նորա վրայ արդէն շատ դոհունակութեամբ կը խօսին ճանաչողք, և յոյս ունինք թէ նորա պաշտօնավարութեան միջոցին Փրովիտէնսի և մօտակայից Հայերը ամեն կերպով պիտի յառաջադիմեն:

ՄԻ ՆՈՐ ԽՈՇՈՐ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մայիս 29-ին Թիֆլիզում վախճանվեց տոհմական պատուաւոր քաղաքացի Ցարութիւն Գաբրիէլեան Իզբաշեանց, անզաւակ, որն իր ամբողջ կարողութիւնը, մօտ 60—70,000 ռուբլի (կանխիկ դրամով և անշարժ կալուածներով Թիֆլիզում, Գանձակում և Աբասթումանում), կտակել է Ներսիսեան ուսումնարանին և զանազան բարեգործական նպատակների համար:

ՄՇԱԿ

Ա. ԵՒ Մ. ԳԱՐԱՃԿԻՈՍԵԱՆ

71 WALL STREET

NEW YORK

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ: Քաղաքէս հեռու գտնուողք կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ:

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԱՆԳԼԻԵՐԷՆ ՀԱՅՐԻ ՄԱՍԻՆ

Անգլիերէն ՀԱՅՐԻ հրատարակութիւնը կախակցուած է տնտեսական պատճառներով։

ՄԸՐՉԸՐԸՆ

ՄԱՐՁԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Դ.ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր Եղիտասարդք։ Գին 50 սէնթ։

ԷԿՈՒՅԻ ՄԸՍԻՆ

SIEGEL · COOPER Co.

SIXTH AVENUE 18th & 19th STS. NEW YORK.

Պատիւ ունինք յարգոյ Հայ հասարակութեան ծանուցանել թէ մենք վերոյիշեալ տիեզերահռչակ մեծ վաճառատան առաջին յարկին վրայ յատուկ տեղ մ'ունինք ուր արուեստական ակռաներ կը շինենք ու կ'ընծայենք մեր յաճախորդներուն, թէ հատով, թէ վերի շարքը ամբողջ, թէ վերի ու վարի ծնօտներու ակռաները միասին։ Մեր շինածը ամենալաւ, ամենադիմացկուն տեսակէն է։ Այն Հայ Տիկինները ու Պարոնները որ անգլիերէն լաւ չեն խօսիր, պիտի գտնեն մեր քով դիւրութիւն, վասն զի մեզի օգնական ունինք հայ ատամնաբոյժ մը։ Վերի ծնօտի ամբողջ շարքը ութ տոլարով կը շինենք, վարինն ալ ութ տոլարով։ Մեր գները յոյժ չափաւոր են, ու գործը յոյժ ընտիր։

E. P. HAYES, D. D. S.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ԸՐԸՐԸՏԵԸՆ ԾԸՇԸՐԸՆ

ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

14 Market St., Worcester, Mass.

Այս է ճաշարան և Հոթէլ միանգամայն, ուր ուղեւորներ կրնան օթեւանել, գիշեր մը կամ օրերով, և հայկական ընտիր կերակուրներ ուտել, յոյժ դիւրամատչելի գներով։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԻԹՃԷՆԲՃԵԱՆ

ճաշարանապետ և հիւրանոցի տեսուչ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Մեծատոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և հաւաքեց

Տիգրան Մ. Պեսիկեան

Նիւ Եորք, 1897։

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ։ Եօթը հազար բառ կայ։

Գինն է 50 սէնթ կամ 2½ ֆրանք։

Դիմել առ ՀԱՅՐԻ խմբագիրն

341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղուին գիրք չենք կրնար յղել։

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.

Ա. տարի,	1	տոլար	50 սէնթ	կամ	7.5 ֆր.
Բ. ,,	2	,,		կամ	10 ֆրանք։
Գ. ,,	2	,,	,,	,,	,,
Դ. ,,	2	,,	,,	,,	,,
Ե. ,,	2	,,	,,	,,	,,
Զ. ,,	1	,,	,,	5	,,

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄԱՆԵԱՅ

Տարեկան բաժնեգինն է կանխիկ երկու տոլար (տասն ֆրանք)

Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.

341 West 23rd St., New York.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ